

Բ. Հոռմ երթալու հրաւերին, Գ. Տոմարի
ընդունելութեան մասին, չատ որոշ են:

Ազարիա կաթողիկոս կ'երեւայ թէ տա-
կաւին հաւատք ունէր Հոռմի աջակցու-
թեան վրայ, հետեաբար իր նախորդնե-
րուն պէս Պապը խնկարկող բացատրու-
թիւններ կը գործածէ: Այս շողոքորդ ոճը
սակայն յայտնի կ'երեւայ թէ ուրիշ բանի
համար չէ եթէ ոչ քաղաքական և նիւթա-
կան աջակցութեանց ականկալութեամբ, զոր
այնքան ուրիշ հայ կաթողիկոսներ ալ ու-
նեցած էին Ազարիայէն առաջ: «Եւմի ի ներ-
քոյ իշխանութեան, կ'ըսէ Ազարիա, վասն զի
եւմի իբրեւ զմի այգի առանց պարսպի եւ պահ-
նորդի ցրուեալք սոս եւ անդ, եւ եւմի զիս ոչ-
խար ի մեջ գայրոց եւ որպէս զգառիւնք ի մեջ
առիւծոց, եւ անենեմիս եւմ գերի ի ներքոյ ա-
նողորմ տեսնց, որք վասն մեղաց մերոց ա-
մենայն օր տանջեն եւ չարչարեն զմեզ ազանու-
թեամբ եւ ոչ կշտանան բնաւ, զի տեսնել եւ
սոխտմիս եւմ եւ ոչ կարեւմ շարժել քայլ մի ա-
ռանց երկիւղի եւ մեծ փորձանաց»:

Այս պայմաններու մէջ ապրող կաթո-
ղիկոս մը, որ այլուր «փրանգաց» հետ յա-
րաբերութիւն մշակել իսկ վտանգաւոր կը
համարէ, չրջապատող ազգերու թշնամու-
թիւնը հրաւիրելու տեսակէտով, չի մեր-
ժեր իսպառ Հոռմի պապին հրաւերը, այլ